ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« -----» ---------- 2020թ. N----Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը, ղեկավարվելով ‹‹Գույքահարկի մասին›› օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը (ՀՎՀՀ 01505571) սեփականության իրավունքով պատկանող, Ավ. Իսահակյան փողոցի 18/3, Ավ. Իսահակյան փողոցի 16 հ. 3/3, Ավ. Իսահակյան փողոցի 16 հ.3/2, Ավ. Իսահակյան փողոցի 16ա, Ավ. Իսահակյան փողոցի 16ա հ.28, Ավ. Իսահակյան փողոցի 18, Վարդանանց փողոցի 109 հ.37 և Քաջազնունու փողոցի թիվ 1 հասցեներում գտնվող շինությունների նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն՝ ազատելով 3244259 /երեք միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար երկու հարյուր հիսունինը/ դրամի չափով գույքահարկի վճարումից /ապառք՝2861766 դրամ, տույժ՝ 382493 դրամ/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Կենտրոն վարչական շրջանի Ավ. Իսահակյան փողոցի 18/3, Ավ. Իսահակյան փողոցի 16 շենքի 3/3, Ավ. Իսահակյան փողոցի 16 շենքի 3/2, Ավ. Իսահակյան փողոցի 16ա, Ավ. Իսահակյան փողոցի 16ա հ. 28, Ավ. Իսահակյան փողոցի 18, Վարդանանց փողոցի 109 հ. 37 և Քաջազնունու փողոցի թիվ 1 հասցեներում գտնվող շինությունների 2019 թվականի գույքահարկի գումարը 19.03.2020 թվականի դրությամբ կազմում է 3244259 /երեք միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար երկու հարյուր հիսունինը/ դրամ: Կազմակերպությունը չունի ֆինանսական միջոցներ և գտնվում է ֆինանսական ծանր կացության մեջ, որի հետևանքով չի կարողանում կատարել գույքահարկի հարկային պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի կույրերի միավորում հաշմանդամների հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը՝ 3244259 /երեք միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար երկու հարյուր հիսունինը/ դրամի չափով /ապառք՝ 2861766 դրամ, տույժ՝ 382493 դրամ/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի կույրերի միավորում հաշմանդամների հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի կույրերի միավորում հաշմանդամների հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ